ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 04.08.2022թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/03» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 26 օգոստոսի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի (այսուհետ՝ Կապալառու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 04.08.2022թ. կնքված N «ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/03» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6-րդ կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին Պայմանագրի 1.3 կետում նշված աշխատանքների կատարման 70 օրացուցային օր ժամկետը երկարձգել 28 օրացուցային օր ժամկետով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***<<ԱԳԱԹ-777» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 900011192151	ՀՎՀՀ՝ 01807983
ՀՎՀՀ՝ 02583241	Հ/Հ՝ 220098534823000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավար՝ Ա. Հարությունյան	Տնօրեն՝ Դ. Եսայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ